ինչպես և արեց իսկությամբ: Դավիթ խանը փախավ և գնաց Գանձակ: Իսկ երբ շահը Ղոռղչի բաշուն ուղարկեց Մովրովի վրա, մարդ ուղարկեց Դավիթ խանի մոտ, որ գա Ղոռղչի բաշու հետ: Իսկ նա կոչին չընդառաջեց, այլ պատրվակ բռնեց, թե որպես թե վերք ունի, որի պատճառով չի կարող գնալ: Պատերազմը վերջանալուց և Մովրովի՝ օսմանցիների երկիրը փախչելուց հետո Դավիթ խանը իմացավ, որ հակառակ է կանգնել շահին, այս պատճառով փախավ նաև ինքը վեց մարդկանցով և գնաց օսմանցիների երկիրը, գտավ Մովրովին և այնտեղ մնաց, այնտեղ՝ օսմանցիների երկրում էլ կորավ:

ԳԼՈՒԽ ԺԹ
ՇԱՀԻ ԵՄԽԱՆԱ ԳՆԱԼԸ

Ինչ պատմություն որ լսել եմ, այն եմ գրում, բայց հետ ու առաջ լինելը և թվականը չգիտեմ: Իսկ ովքեր կարդում եք, մի մեղադրեք, իսկ եթե սա ձեզ դուր է գալիս, Տիրոջ շնորհն է, իսկ եթե դուր չի գալիս, դուք ողջ եղեք: Իսկ այն առաջիկա պատմությունը, որ պիտի պատմենք, թե ով պատմեց մեզ, կասեմ: Մի վաղեմի ծեր մարդ կար՝ Վաղարշապատ գյուղից, անունն էր Երանոս: Սա ասաց, երբ շահը տեղահանեց մեր երկիրը, ես քսանամյա էի, դարձա շահի ջորեպան: Ուր որ գնար շահը, ես իմ ջորին բարձում և նրա հետ գնում էի, ուր նա գնար: Թավրիզից վերադարձին Ղազվին գնալու ժամանակ հասա մի գյուղաքաղաք, որ կոչվում է Եմխանա: Սա գտնվում է Ղափլանքու լեռան այս կողմը՝ Թավրիզի կողմը:

Շահը ըստ իր վավաշոտ սովորության՝ հրաման արձակեց, որ բոլոր ղեռահաս կանայք և աղջիկները հավաքվեն մի վայրում: Շուրջանակի նստեցրեց միմյանց դեմառդեմ և այնտեղ ոչ մի արու մարդ չթողեց, այլ բոլորը կանայք էին և փոքր տղաներ:

Սեղան բացեց ուտելու, խմելու և պարելու համար, իսկ ինքը ելավ ոսկի բաժակով գինի էր տալիս նրանց: Որին որ սիրում էր, բաժակի կեսը ինքն էր խմում, կեսը տալիս էր նրան: Բազմածների հետ կար մի գեղեցիկ կույս, որ ոչ ուտում էր, ոչ խմում, ոչ խոսում և ոչ էլ վեր էր նայում: Սա խոսքկապված էր մի երիտասարդի հետ: Շահը մոտեցավ նրան և բռնեց աղջկա ծնոտից և ասաց. «Աղջիկ,

դու ինչու վերև չես նայում»: Հազիվ աղջիկը վեր նայելով և բերանը բանալով՝ ասաց. «Ով թագավոր, դու նույնպես վեր նայիր»: Երկու անգամ ասաց այդ միևնույն նախադասությունը: Իսկ շահը մտքում պահեց աղջկա խոսքը և երբ իր ուրախությունը վերջացրեց, հրամայեց յուրաքանչյուր կնոջ գլխին մի երեսծածկոց գցել՝ այսինքն ռոհփակ (քող), իսկ տղաներին՝ յուրաքանչյուրին մի գլխարկ և բաց թողեց նրանց:

Ինքը գնաց իր տեղը և կանչեց այն աղջկան, որ իր հետ խոսեց (խնջույքի ժամանակ), համբուրեց նրան և ասաց. «Ախ, դու, իմ դուստր, այն ինչ խոսք էր, որ դու ինձ ասացիր իմ երեսին»: Աղջիկը ասաց. «Հայր իմ, շահ, ես քո աղախինն եմ, ահա երկու տարի է, որ ինձ համար խոսք են տվել մի երիտասարդի, ես բնավ տղամարդու երես չեմ նայել ու չեմ խոսել, մեր տանից դուրս չեմ եկել մինչև այսօր, երբ պատռվեց իմ երեսի քողը: Ես պետք է հող մտնեի, քան տղամարդու երես տեսնեի»: Շահն ասում է. «Շատերը ցանկանում են տեսնել թագավորի երեսը և չեն կարողանում, իսկ դու տեսնում ես և վշտանում»: Աղջիկն ասում է. «Եթե ռամիկ մարդու երես տեսնելը ամոթ է, որչափ ավելի ամոթ կլինի մեծ թագավորի երես տեսնելը»: Ապա շահը զարդարեց աղջկան և հրամայեց հարսանիքն անել: Եվ որովհետև արքունական հրամանագրով քաղաքը նրան շնորհեց, որ որդոց որդի պատկանի նրան մինչև հավիտյան: Այդպես ավագ դստերն են բաժինք տալիս: Եվ ոչ ոք չպետք է իշխի այդ գյուղաքաղաքին, բացի ավագ դուստրից, և այդ պատճառով քաղաքը կոչվում է Ղզշահրի՝ աղջկա քաղաք, իսկ ըստ մեզ՝ Միանա:

ԳԼՈՒԽ Ի
ԳՈՂՋԱԼ ՄՆՈՒՆՈՎ ԿՆՈՋ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Այն ժամանակ, երբ երկրները տարագրեց շահը և տարավ Պարսկաստան, նրանց հետ տեղահանեց և տարավ Աստապատ[77] գյուղը: Աստապատ գյուղից մի գեղեցիկ, լայնաճակատ և հոնակից (հոնքերը միացած), ճոխահեր, պարող ու երազող մի կին կար: Իր ամուսնու մեռնելուց հետո սա այլևս չամուսնացավ և բնակվում էր Սպահան քաղաքում: Երբ շահը շրջում էր Ջուղայում, և ահա տա-